Քաղվածք

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության գիտամեթոդական խորհրդի 2025 թ.
մարտի 6-ին կայացած 3-րդ նիստի
արձանագրության

Նիստի նախագահ՝ Ա. Քոչարյան

Քարտուղար՝ Վ. Սահակյան

Մասնակցում էին՝ Հրանտ Հովսեփյան, Ամիրան Բադիշյան,
Հովհաննես Սանամյան, Ալեքսանդր Բադալյան,
Աննա Խաչատրյան, Գրիգոր Բաբաջանյան, Լևոն Վարդանյան

Հրավիրված էին՝ Հրաչյա Թարխանյան,
Հրանտ Մկրտչյան, Ամալյա Դավթյան,
Նորիկ Բունիաթյան, Գուրգեն Հովհաննիսյան,
Աշոտ Բալայան

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

6. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու պետական բժշկական քոլեջ » ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների նախագծի քննարկում:

Զեկ.՝ Ն. Բունիաթյան

ԼՍԵՑԻՆ՝ *Ն. Բունիաթյանը ներկայացրեց հարցը* – Շենքը կառուցվել է 1930-ական թվականներին: Շենքը մեկ անգամ վերակառուցվել է, բակային ճակատում կցակառույց է առաջացել, որի տեխնիկական վիճակն անբավարար է և վթարավտանգ: Այդ հատվածն ապամոնտաժում ենք և նույն ձևով հավաքում: Կրող կոնստրուկտիվ համակարգի հետ կապված սխեմաներն ունենք: Ներկայացված հատվածում հարաչափը սեյսմիկ նորմերին չի համապատասխանում, պետք է դեֆորմացիոն կարով արանջատվի: Կրող պատերի միջև հեռավորությունը երկայնական ուղղությամբ նույնպես չի համապատասխանում: Այդ հարցը լուծելու համար դիագֆրամաներ ենք դնում, քանի որ դեֆորմացիոն կարանը ստանալիս, շրջանակներ դնելիս պատուհանները ոստիպված պետք է փակենք, դրա համար նման լուծում ենք տվել: Միջհարկային ծածկը բետոն է, վերևի ծածկը ծեփված փայտե տախտակամածով է իրականացված: Տեղադրել ենք հակահրդեհային մետաղական աստիճավանդակ, էվակուացիայի համար ունենք երեքը, հնարավորություն ունենք նաև վերելակ տեղադրելու:

Գլխավոր ճակատում ժամանակին մետաղապլաստե պրոֆիլներով ինչ-որ նախամուտք են սարքել, որն ապամոնտաժում ենք և պատշգամբի բազրիքը փոխարինում ենք՝ բերելով իր հին, նախնական տեսքին:

Առկա քոլեջի շենքը Պ-աձև հատակագծային լուծմամբ շինություն է: Շինությունն ունի և ստորգետնյա և 2 վերգետնյա հարկ, տանիքը բազմալանջ է: Շենքը կառուցվել է նախորդ դարի 30-ական թվականներին: Նրան կից առկա է ավելի ուշ ժամանակաշրջանում իրականացված կառուցապատում: Շենքն ունի միջանցքային տիպի հատակագծային լուծում, բոլոր դասասենյակները բացվում են դեպի ընդհանուր միջանցքը: Միջանցքը հատակագծում ունի 56,50 մ երկարություն և 2.90մ լայնություն՝ ամենանեղ հատվածում: Շենքն ունի 2 աստիճանավանդակ, որոնց միջև հեռավորությունը կազմում է 35.0մ: Աստիճանավանդակները չունեն ելքեր շենքից անմիջապես դեպի դուրս, անջատված չեն հարակից տարածքներից հակահրդեհային պատերով կամ միջնորմներով: Աստիճանավանդակներից մեկին հարող շենքի պատերը շրջափակված են այլ սեփականատերերի պատկանող անշարժ գույքով: Այսպիսով, համաձայն են 21-01-2014 պայմանների, առկա աստիճանավանդակները չեն հասակում տարհանման համար: Հիմնանորոգվող շենքն ունի 3 ելք՝ շենքից դեպի դուրս: Բոլոր ելքերը կազմակերպված են

հիմնանորոգվող շենքի առաջին հարկից, ելքերից ոչ մեկը կահավորված չէ նախամուտքերով: Առաջին հարկում ամենահեռավոր շենքից հեռավորությունը դեպի ելք կազմում է 27 մ:

Համաձայն «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շենքի տեխնիկական վիճակի եզրակացության ուսումնասիրության արդյունքների՝ սույն նախագծով նախատեսվում է առկա բոլոր միջնորմների, դռների և պատուհանների, հատակների ապամոնտաժում: Հրդեհային անվտանգության նորմատիվ պահանջների պահպանման նպատակով, բակային հատվածի կողմից նախատեսվում է արտաքին կրող պատերի մեջ նոր դռների իրականացում, որպեսզի հնարավոր լինի Էվակուացիայի պատշաճ կազմակերպումը:

Սույն Էսքիզային նախագծով նախատեսվում է ապամոնտաժել հիմնանորոգվող քոլեջի շենքի 5.30x14.80մ հատակագծային չափսեր ունեցող երկհարկանի կցակառույց հատվածը: Նախագծով նախատեսվում է մեծացնել կրող պատերի մեջ գտնվող որոշ բացվածքներ, որպեսզի դրանք համապատասխանեն նորմերին: Նախագծով նախատեսվում է ապամոնտաժել առկա տանիքը, իրականացնել կրող պատերի ուժեղացում և բացվածքների ուժեղացում, չի նախատեսվում տանիքի երկրաչափական չափերի փոփոխություն:

Նախագծով նախատեսվում է վերահատակագծել սանհանգույցները քանի որ սանհանգույցների առկա մակերեսները չեն համապատասխանում նորմերի պահանջներին: Նախատեսվում է իրականացնել նոր սանհանգույցներ շենքի ստորգետնյա հարկում, այդ թվում նաև ունիվերսալ սանհանգույցային խցիկ՝ նախատեսված ԲՍԽ-ների համար:

Նախատեսվում է իրականացնել նոր Էվակուացիոն ելքեր դեպի դուրս: Այդ պատճառով երկրորդ հարկում նախատեսվում է իրականացնել նոր ելք և արտաքին մետաղական էվակուացիան աստիճաններ: Սույն նախագծով հիմնանորոգվող քոլեջի շենքի 5,30x14,80 հատակագծային չափսեր ունեցող երկհարկանի կցակառույց հատվածի փոխարեն նախ պատմվում է նախագծել 5,30x25,40 հատակագծային չափսեր ունեցող մեկ ստորգետնյա և երկու վերգետնյա հարկերից բաղկացած կցակառույց հատված: Այդտեղ նախատեսվում է տեղակայել հարկերի միջև ուղղահայաց կապ ապահովող աստիճանավանդակ, որը կծառայի նաև տարհանման համար: Աստիճանավանդակը նախատեսվում է

իրական U1 տեսակի՝ առանձնանցելով այն իրեն հարակից տարածքներից հակահրդեհային պատերով և նախատեսելով ելք՝ աստիճանավանդակից անմիջապես դեպի դուրս: Հակահրդեհային պատերում նախատեսվում է տեղադրել հրակայուն դռներ: Նախագծով նախատեսվում է գլխավոր մուտքի աստիճանների հատվածում և նախասրահում 2 վերհան էլեկտրական հարթակների տեղադրում և հարկերի միջև ուղղահայաց կապ ապահովող մարդաբեռնատար վերելակի տեղադրում: Մարդաբեռնատար վերելակը նախատեսվում է տեղակայել նոր իրականացվող աստիճանավանդակի հատվածում: Նախագծով նախատեսվում է տեղադրել նոր մետաղապլաստե պատուհաններ, նոր արտաքին ալյումինի և ներքին մետաղապլաստե դռներ: Նախատեսվում է իրականացնել նոր հատակներ մամոգրանիտե և Վինիլային: Թաց գոտիներում նախատեսվում է պատերի հարդարման մեջ օգտագործել հախճասալ, իսկ մնացած շենքերը հարդարել լատեքսային ներկով: Սանհանգույցներում նախատեսվում է իրականացնել կախովի պլաստմասե առաստաղ: Նախատեսվում է մաքրել շենքի արտաքին երեսպատումը, իսկ բակային ճակատը ներկել ճակատային ներկով: Տանիքը նախատեսվում է իրականացնել բազմալանջ՝ առանց առկա երկրաչափական չափերի փոփոխության: Տանիքածածկը նախատեսվում է իրականացնել ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից, ջրահեռացումը կազմակերպել ցինկապատ ջրհորդանների և ջրահեռացման խողովակների միջոցով: Տանիքածածկի վրա նախատեսվում է իրականացնել բազրիքներով անվտանգության ճաղաշարեր: Տանիքի կոնստրուկցիայի փայտյա տարրերը նախատեսվում է մշակել հակահրդեհային և հականեխիչ լուծույթով: Նախագծով նախատեսվում է բարեկարգել տարածքը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝

Հ. Մկրտչյան – Արտաքին ճակատի հետ կապված փոփոխություններ չենք իրականացնում: Միջտարածությունները, որոնք կան, հետագայում չեն կարող խնդիր առաջացնել շինարարական աշխատանքներ իրականացնելիս:

Հ. Սանամյան – Բակի ճակատն ամբողջությամբ սվա՞ղ է:

Ն. Բունիաթյան – Այո՛:

Լ. Վարդանյան – Ջրհորդաներում էլեկտրական կաբել տեղադրու՞մ եք:

Ն. Բունիաթյան – Այո՛, մեջը չսառելու համար տեղադրում ենք: Ճաղաշար ենք նախատեսել, տանիքի վրա էլ ուրիշ ոչ մի բան:

Հ. Թարխանյան – Դեպի բակ չէի՞ք կարող ելք ունենալ այդ չորրորդից:

Ն. Բունիաթյան – Այս մի հատվածից ունենք, մյուսից իմաստ չունի:

Հ. Սանամյան – Իսկ երկրորդ հարկի միջհարկային ծածկը փոխո՞ւմ եք:

Ն. Բունիաթյան – Ո՛չ, թողնում ենք նույնը: Ծածկը երկաթբետոն ենք անում, քանի որ ուժեղացնում ենք շենքը, վերևինը փոխում ենք:

Հ. Հովսեփյան – Բակային հատվածի կցակառույցը ո՞րն է:

Ն. Բունիաթյան – Ներկայացված հատվածինը, աջ մասինը կցակառույց չէ:

Հ. Սանամյան – Իսկ ճակատի սրբատաշ քարերի քայքայվածությունն ի՞նչ վիճակում է: Բակային հին ճակատները մի՛ սվաղեք:

Ն. Բունիաթյան – Նախատեսում ենք ապամոնտաժել-վերատեղադրել, որից հետո ճակատը լվանալ:

Հ. Թարխանյան – Սև գո՞յն է:

Ն. Բունիաթյան – Խառը՝ սրբատաշ կարմիր ու սև քարով, Գյումրու կոլորիտային ճարտարապետությամբ:

Հ. Հովսեփյան – Տանիքն ի՞նչ եք անում:

Ն. Բունիաթյան – Տանիքը փոխում ենք, նույն ձև ցինկապատ թիթեղով վերականգնում:

Հ. Հովսեփյան – Կցակառույցն ապամոնտաժո՞ւմ եք և նույն ձևով իրականացնո՞ւմ սվաղով:

Ն. Բունիաթյան – Այո՛, դեֆորմացիոն կարով առանձնացված, շրջանակային հիմնակմախքով սարքում ենք:

Հ. Թարխանյան – Սեփականատերը կհամաձայնվի՞ այն ապամոնտաժել և հեռացնել:

Ն. Բունիաթյան – Օգագործվող մակերես է: Էսքիզով նախատեսել ենք սվաղել և ճակատային ներկով ներկել:

Հ. Հովսեփյան – Ես դեմ եմ, սարքում եք մի այլանդակ բան, որովհետև հնարավոր է մի 50 տարի հետո քանդե՞լ:

Լ. Վարդանյան – Քանի որ այսօր դրա կարիքը կա, կառուցեք, բայց հուշարձան մի՛ սարքեք: Ֆունկցիայով ի՞նչ է:

Ն. Բունիաթյան – Ֆունկցիայով լսարաններ են:

Լ. Վարդանյան – Ուրեմն արե՛ք ապակի:

Հ. Հովսեփյան – Կցակառույցը վերանայե՛ք, իրականացրե՛ք ապակիով:

Գ. Բաբաջանյան – Կողմ եմ՝ կցակառույցն ապակեպատ իրականացնելու պայմանով:

Ա. Քոչարյան – Իրականացրե՛ք ապակիով:

Ա. Բադիշյան – Անհրաժեշտ է պահպանել բակային ճակատի հին հատվածների շարվածքը, կցակառույցի պատերն իրականացնել ապակեպատ:

Հարցը դրվեց քվեարկության՝

Կողմ ՝ 2

Կողմ պայմանով՝ 6

ՈՐՈՇՎԵՑ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների նախագիծը համարել ընդունելի՝ պայմանով, որ կցակառույցն իրականացվի ապակեպատ:

Խորհրդի նախագահ՝ **Ա. ՔՈՉԱՐՅԱՆ**

Քարտուղար՝ **Վ. ՍԱՀԱԿՅԱՆ**